

Յունվարի 19-ից սկսած հեռագիրները բաղմամբիւ լուրեր բերին Փարիզում և առհասարակ Գրանսիայում կատարուած արեւնահեղ դէպքերի մասին եկեղեցական գոյքերը ցուցակագրելիս: Այդ առթիւ աղմկալից նիստեր են տեղի ունեցել պատգամաւորական ժողովում, որի նկարագրից տուա՞նք ենք բերում հետևեալ հատուածը. — Պատգամաւորական ժողովում խօսեց Գրուսոն. մասնանիշ եղաւ, որ կաթողիկոսները ըողոքում են իրենց եկեղեցիներում կատարուած կոդուպուտի համար: Նրանից յետոյ խօսող Բրիանը պաշտպանում էր եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքը և վստահութիւն յայտնեց, որ վերջին խօսքը հասարակապետութեանն է պատկանում: Այդ միջոցին աջակողմի անդամ Կէնէլն աղաղակեց. «Ա. Կլօտիլդի եկեղեցում այժմ արիւն է հասում»: Այդ միջոցին տեղից վերհացան աջակողմի մի քանի պատգամաւորներ և թողին խորհրդասրահը: Պալատի նախագահ Դաւմերը յայտարարեց. «Ընչ էլ լինեն դրսից եկած լուրերը, դուք պէտք է կատարեալ խաղաղութիւն պահպանէք»: Բրիատէն առաջարկեց կառավարութեան գործել տաքտով, բայց եռանդով, երբէք չը թուլանալով յիշեալ օրէնքն իրագործելիս: Այնուհետև խօսեց Ռիբոն, յայտնելով որ ինքը երկիւղ է կրում կրօնական պատերազմից և ցաւում է այն վտակոտութեան համար, որով կատարւում է եկեղեցական գոյից ցուցակադրութիւնը: Կօշէնը քննադատում է եկեղեցական գոյքի ցուցակագրութիւնը: Բամէլը յանդիմանում է կառավարութեան, որ խախտում է օրէնքը և սպանութիւններ է կատարում ու Կլօտիլդի եկեղեցում: Նախարարապետը ըողոքում է այդ խօսքերի դէմ և սպառնում թողնել դահլիճը, եթէ յետ չեն վերցուել այդ խօսքերը: Բամէլին կարգի են հրաւիրում: Չախակողմը միաբան ծափահարում է նախարարապետ Բուլիէին: Բամէլը նորից կրկնում է. «մահ», «սպանութիւններ» բառերը և նորից կարգի է հրաւիրւում:

Այնուհետև, չը նայած աջակողմի խիստ ըողոքներին, վիճաբանութիւնը վերջացած է յայտարարւում: Բուլիէն ընդունում է հերթական գործերին անցնելու բանաձևը, որն արտայայտում է ժողովի վստահութիւնը, որ կառավարութիւնը կ'ապահովէ եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքի գործադրութիւնը: Այդ վճիռն ընդունւում է 384 ձայնով 166-ի դէմ:

